



ԻՎԱՆ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ ՆԱԶԱՐՈՎ

Սովետական քիմիական գիտությունը ծանր կորուստ կրեց: 1957 թ. հուլիսի 30-ին, 52-րդ տարում, մահացավ գիտության խոշորագույն գործիչներից մեկը՝ ականավոր քիմիկոս-ակադեմիկոս Ի. Ն. Նազարովը:

Ի. Ն. Նազարովը ծնվել է 1906 թվին: 1931 թվին ավարտել է Մոսկվայի Կ. Ա. Տիմիրյազևի անվան Գյուղատնտեսական ակադեմիան և 1934 թ. թեկնածուական դիսերտացիան պաշտպանելուց հետո աշխատում էր ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի Օրգանական քիմիայի ինստիտուտում, դեկավարելով նուրբ օրգանական սինթեզի լաբորատորիայի մեծ կոլեկտիվը:

Նազարովի շկոլայի հիմնական հետազոտությունները նվիրված են ածխաթթվերի և նրա ածանցյալների քիմիային: Առանձնապես հիշատակության արժանի են վինիլթիոֆենիլկարբինոլների ուղղությամբ կատարված աշխատանքները. այդ միացությունների պարզագույն ներկայացուցիչը, իր՝ Նազարովի առաջարկած մեթոդով ստացվում է գործարանային մասշտաբով և կոցնոդ նոր նյութեր պատրաստելու հիմք է հանդիսանում (Նազարովի «Կարբինոլային սուսինձ»): Վինիլթիոֆենիլկարբինոլները չհագեցած միացությունների քիմիայի նոր գլուխ ստեղծելու հիմք ծառայեցին դիվինիլ և վինիլալիլկետոնների, իզոկումարոնների սինթեզը, դիենիների հիդրատացումը ցիկլոպենտենոնների փոխարկումը և այլն: Վերջին առաջիկան հինգանդամանի օղակով բաղմազան միա- և բազմաօղակ միացությունների հեշտ ստացման մեծ հնարավորությունների ստեղծեց:

Նազարովի աշխատանքների մի ավել ընդարձակ խումբը նվիրված է ստեղծողներին ազգակից բազմաօղակ միացությունների սինթեզին, իրականացված է անդրոստանի, հոմոանդրոստանի, էստրանի և սրանց հետերոցիկլիկ համամասների կմախքով ցիս-ցիս շարքի միացությունների լրիվ սինթեզը, որով ուղի է գծված ժամանակակից օրգանական քիմիայի հիմնական պրոբլեմներից մեկը՝ ստերոիդային միացությունների սինթեզը լուծելու համար:

Մեծ նվաճումների է հասել Նազարովի շկոլան գիվինիլացետիլենի շարքի ածխաջրածինների հիդրատացմամբ ստացվող գիվինիլկետոնների հիման վրա հետերոցիկլիկ միացությունների սինթեզի բնագավառում: Առաջարկվել են մի ամբողջ շարք պիպերիդինային, պիրանային, թիոպիրանային և ֆուրանային միացություններ սինթեզելու նոր, պարզ մեթոդներ: Ստացված ալդեհիդային միացություններից մի քանիսը ֆիզիոլոգիական ակտիվ դուրս եկան: Այդ աշխատանքները հանգեցրին իր գործողությամբ մորֆինին գերազանցող և թունականություն չունեցող թմրեցնող նոր միացությամբ պրոմեդոլի սինթեզին: Գրոմեդոլը ներկայումս արտադրվում է արդյունաբերական մասշտաբով և լայնորեն գործադրվում է ՍՍՌՄ կլինիկաներում:

Կպցնող նոր նյութերի ստացման և ացետիլենի ու նրա ածանցյալների քիմիայի բնագավառում կատարած աշխատանքների համար Նազարովը երկու անգամ արժանացել է Ստալինյան մրցանակի:

Նազարովի աշխատանքներն իրենց նպատակասլացությամբ և թափով խոշոր ներդրում են ժամանակակից օրգանական քիմիայի մեջ:

Շատ բան է արել Նազարովը նաև գիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ: Նրա սաներին կարելի է հանդիպել ոչ միայն Մոսկվայում, այլև մեր երկրի բոլոր ռեսպուբլիկաներում, ինչպես և ժողովրդական դեմոկրատիայի երկրներում:

Նազարովը հրապարակել է ավելի քան 200 աշխատություն և ստերոիդների քիմիայի վերաբերյալ մեծածավալ մենագրություն:

Ի դեմս ակադեմիկոս Իվան Նիկոլանիչ Նազարովի սովետական գիտությունը կորցրեց ժամանակակից խոշորագույն օրգանիկ քիմիկոսներից մեկին: